ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Գարսկաստանի համար տարեկան 5 ֆր. և կամ 2 րբլ. ոս. Թղթդրմ.
Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 ֆր., վեցամսեայն 10 ֆրանգ և եռամսեայն 5 ֆրանգ։
Բաժնեգիները կանխիկ կը վճարուին և տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։
Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Է ՏԱՐԻ ԹԻԻ 22
1891 ՀՈԿՏԵՄԲԵՐ 31
ՀՈԿՏԵՄԲԵՐ 19 (Հ. Տ.)
ԳԱՓԱՔ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ Դ-Շ-ՇԲԹ. օրեր

ՊԱՏՄԱՆՆԵՐ
Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։
Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։
Յանուցմունք կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՑՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

==

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Քաղուած կանոնագրէն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգումներ մացունելու Թիւրքահայաստանի մէջ, հայ ժողովրդի տեղական պէտքերուն համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ. կաշխատի ներքին այժ գոյացունել Ազգին մէջ իւր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիր՝ որ, բացի զանազան լուրեր տալէ իբրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարաբնակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։ (*)

Ծանօթ. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակցիլ կամ թղթակցիլ ուզողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian
(FRANCE) Marseille

(*) «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպատակէ Ամերիկա լրագրի հրատարակմանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական ճգնաժամը. — Հայեր ի Թիւրքիա. — կովկասեան լուրեր. — Հայեր Ամերիկա. — Նոր հրատարակութիւններ. — Ռուսահոդների միջադէպ մը. — Արտասահմանի լուրեր. — Ծանուցմունք. — Բացատրական (Աշխատեցք տարածել)։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Ա

Ազգերի բաղդն ոչ մի ժամանակ այնպէս լարուած չէ եղել, որպէս այժըմ. թէ՛ հզօր պետութիւնք, թէ՛ փոքրաթիւ ազգութիւններն, ամենքն էլ ուշադրութեամբ դիտում են իւրեանց շուրջը, իմանալու թէ ո՛ր կողմից պէտք է փոթիկայ վիթխարի փոթորիկը։ Սոյնպիսի դրութիւն մեծ նշանակութիւն ունի Հայոց համար, զի այսպիսի հանգամանքներում է որ մեծամեծ պետութիւնները կարող են կորստեան մատնուիլ, տապալուիլ. մինչ փոքրիկ ազգերը, անյայտ ցեղերը կը բարձրանան, գլուխ կը կանգնեն։ Ֆրանսիա, Գերմանիա, Ռուսիա, Աւստրիա և Իտալիա այդ փոթորիկից փախչիլ չեն կարող և դեռ յոյս ունեն յաղթութեան. իւրաքանչիւրն իւրը միայն երեւակայելով. բայց ի՞նչ են մտածում այն ցեղերն, որոնք կամ մեծ դեր չունեն, կամ փոքր գոլով անգամ՝ մեծերի սարսափ են և կամ՝ որ աւելի վատթարն է՝ հզօր գազանների կերակուր պիտի տրուեն։ Ահա նշանաւոր կէտ մի, որ կարող է փոթորկից հեռուներին եւս զբաղեցնել։

Ռումինիայի, Բուլգարիայի, Սերբիայի և նոյն իսկ Մոնտենեգրոյի, Դանիայի և այլոց ո՞վ գիտէ ինչ է սպասում, ո՞ր պետութեան խորհուրդ պիտի լինեն մեծ էրարանցումի միջոցին. սակայն ո՛րչափ աւելի չհաղորդական է, որ նոյն իսկ մեծ պետութիւնները չը գիտեն թէ ի՞նչ պիտի լինի իւրեանց ապագան։ Փառաւէ Գերմանիայի պետական կազմը, փառաւէ և Իտալիայինը, բայց ո՞ւմ չի ատում է Ռուսիայի սիրտը՝ ժողովրդի կամաց հարուածների նեղքոյ. ժողովուրդը, որ բահ ու բրիչով պետութիւն կանգնել գիտէ նոյն ժողովուրդը գիտէ և բռունցքով գահեր խորտակել, վա՛յ նրան որ ժողովրդի կամքով չէ առաջնորդւում։ Այն ժողովուրդն, որ թագաւոր ու կայսրներ տալ գիտէ, նոյն ժողովուրդը չէ խորշում թագաւոր ու կայսրներ իւր դանակով սրբելու. վա՛յ նե՞ն. չատերն էլ ռամիկ գիւղացիներից դիմում են Հայր Սուրբին (Առաջնորդին) որ նա փաչից կամ գայմագամից խնդրէ ամեն բան և կատարում տայ մեր ցաւերին։ Երբ Հայր Սուրբը պատասխանում է թէ, «սիրելի որդեա՛կս, չեն լսում խնդիրները, ի՞նչ պէտք է անեմ». խեղճ գիւղացին գլխիկոր, տրտում, յուսահատած վերադառնում է իւր թշուառ ընտանիքի մօտ ոչինչ չկարողանալով անել. խեղճի մտքիցը անգամ չէ անցնում թէ ես էլ նրանց պէս մարդ եմ, ես էլ նրանց անեմ ինչքան որ կարող եմ. իսկ մեր Հայր Սուրբն էլ չէ կամենում հասկացնել նրան թէ մի՛ յուսահատիր, գնա դուն էլ նրանց պէս արա. մի՛ վախեցիր Թիւրքից, արդարութիւն չկայ, ինչ որ ձեզ կանեն, դուք էլ նրանց արէք. «ակն ընդ ական, ատամն ընդ ատամն» քարոզեց Մովսէս Իսրայէլացիներին, երբ կը հարստահարուէին օտար ազգերէն։

Սիրելի և ազնիւ եղբայրնե՛ր, լաւ է որ այսօր մեզ մի ազատ բերնով խօսող հայերէն թերթ ունենք Եւրոպայում որը ամեն չարաթ տեսնելուց, կարդում ենք այն բոլոր անցքերը որ կատարվում են մեր եղբայրների և քոյրերի համար, այնպիսի անցքեր որոնց դիմանալու համար քարէ սիրտ պէտք է ունենալ. բայց մեր սրտերը այնքան ճնշումներ կրելով կարծրացել են արդէն որ նոր անցքեր կարդալիս ոչինչ ազդեցութիւն չէ ունենում մեզ մտածում այն տիրողին, որ ժողովրդին բռնաբարելու համար է ապրում։ Ժողովուրդն է պատճառն, որ հինչքան էլ հզօր լինեն Գերմանիա և Ռուսիա, այնու հանդերձ վախով են ապագան դիտում։

Թողնենք այլոց վիճակն և նայենք մեր հարեւաններին։ Ռուսիան Պետրոս Մեծի սաուերագծին հետեւելով յառաջ է ընթանում, մանաւանդ իւր ժողովրդի մտքերն զբաղեցնելու համար։ Հնդկաստան, Թիւրքիան, Եբուսաղէմ, Բալքան թերակղզին նորան մօտաւոր զբաղեցնող են։ Ամենայն մի կայսր մէկ քայլ արաւ այդ ուղղութեամբ և ահա այժմեանը մէկ ոտը դրել է Հնդկաստանի մօտը և միւսն էրզրումի ճանապարհին, Հնդկաստանն ու Թիւրքիան կլանել է ուզում։ Եւրոպան գիտէ որ Պետրոս Մեծի կտակը սրբագործուել է կայսրների համար և ահա Գերմանիան իւր կաշու վրայ մտածելով, իւր քաղաքական հորիզոնի վրայ մի ժամանակ փայլող և այժմ ընկած վարսամ՝ Բիսմարկի բերանով ասում է քաղաքագիտօրէն, և այս ասում է, կարծես թէ Աւստրիայի շահերն աչքի առաջ չունե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԱՇԽԱՏԵՆՔ ՏԱՐԱԾԵԼ»

Մենք մեր այս վերնագրով յօդուածը ուղղում ենք այն ամեն ճշմարիտ և ողջամիտ հայրենասէրներին որոնք սիրտ ածած են աշխարհի այլ և այլ կողմերը և հառաչում են իրենց քաղցր հայրենիքը յիշելով, որ օրից օր վատթար դրութեան մէջ է գտնուում։ Այնտեղ Հայաստանում, մեր սիրելի հայրենիքում, մեր հայրերը, մայրերը, եղբայրները, քոյրերը սպանվում, կողոպտվում, այրվում, առեւանգվում, ծեծվում, բանտարկվում են միշտ փիւրդերից և թիւրքերից և էլ չկարողանալով տանել այսքան հալածանքի, թողնում են փախչում օտարութեան մէջ որ չտեսնեն վերջին հալածողին, այսինքն հարկահաւաքին, որ ոսոխականներով պէտք է գայ։ Խեղճ Հայերս բարոյապէս թուլացած և սարկացած դարերէ ի վեր ճընշումների տակ, այնքան ենք ընտելացել բռնաւորների լծին որ երբ մեր չաւերի աչքին առաջ ամեն տեսակ գործեր կատարում են անիրաւ փիւրդերը և թիւրքերը, չենք գրգռվում, չենք մտածում դիմադրութեան միջոցներին վրայ, այլ միայն ախուվախ ենք անում, Աստուածենք կանչում կամ բաւականանում ենք ասելով թէ մեր Իւսուասատանի և Եւրոպայի եղբայրները արդեօք կուգան կօգնե՞ն։ չատերն էլ ասում են թէ ինչ կարող ենք անել մենք մեր ձեռքերով, մենք ոչինչ միջոց չունենք, մեր ձեռքը ոչինչ զէնք չունի։ Ամենքն էլ ասում են թէ մենք ոչինչ կարող ենք անել, ամենքն էլ ասում են թէ ուրիշները պիտի անեն, ամենքն էլ ասում են թէ ուրիշները պիտի գան։ Ուրիշները ո՞վ են, ինչո՞ւ չենք ասում թէ մենք ենք պիտի անենք, մենք ենք պիտի գանք

ՀՅՈՒՍԻՍԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Ի

Ընդ Թղթակ՝ կոմսին որ Թղթեր

Ընդունելի եղաւ ինձ, սիրելի՛ կոմս, ձեր նամակը, որ ինձ կը հաղորդէր ձեր ճամբորդութեան ամէն մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ ձեր ներկայ գտնուելիքը։ Ես ալ ձեզ կը հաղորդեմ իմ կեանքիս ընթացքը, որ ինչպէս գիտէք, ամենեւին հետաքրքրական չէ։ Ես ամէն օր նոյն բանը կ՚ընեմ, որ է՝ կ՚ուտեմ, կը խմեմ, կը քնանամ, կը զբօսնում եւ կը ձանձրանամ։ Ես ալ ձեզ պէս կը սպասեմ, որ ժամանակը անցնի, որպէսզի ես ալ ձեզ պէս ուրախ ըլլամ։ Ես ալ ձեզ պէս կը սպասեմ, որ ձեր ուրախութեան ժամանակը գայ, որպէսզի ես ալ ձեզ պէս ուրախ ըլլամ։ Ես ալ ձեզ պէս կը սպասեմ, որ ձեր ուրախութեան ժամանակը անցնի, որպէսզի ես ալ ձեզ պէս ձանձրանամ։ Ես ալ ձեզ պէս կը սպասեմ, որ ձեր ձանձրոյթի

— Կ. Պոլսի Ազգային Հիւանդանոցի վիճակին վրայ մի դիտողութիւն պատրաստելով, Կ. Պոլսի հայ բժշկական դասէն 42 բժիշկներ ստորագրեր և Ա.ՄՆ. Պատրիարքին հաղորդած են։ Ա.յդ գրութեան մէջ ստորագրող բոլոր բժիշկները Հիւանդանոցի բժշկական յոռի վիճակը քննադատելով, դարմանները կը յանձնարարեն և կառաջարկեն որ ասկէ ետք Հիւանդանոցի հոգաբարձութեան անդամներէ երկուքը բժշկական դասէ առնուին և իրենք ստորագրողներն ալ յօժարութիւն ցոյց կուտան երբ այցելու, իւրաքանչիւրը իր կարգին, հիւանդանոցը այցելել և հսկել որ դեղօուշիներ չլինին, եթէ Ազգային վարչութիւնը կընդունի իրենց այդ մարդասիրական ծառայութիւնը։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Արձագանքը կըհաղորդէ որ Թիֆլիզի Հրատարակչական ընկերութիւնը որոշեր է երկու նոր գիրքեր թարգմանել տալ ռուսերէնէ և տպագրել։ Ա.յդ գիրքերէ առաջինը մի նկարագիր է Հայաստանի այն տեղի վիճակին երբ Թամերի տիրապետութիւնը նոր սկսած էր։ Ա.յդ գրքի անտիպ բնագիրն հայերէն եղած է, բայց այժմ չկայ, իսկ ռուսերէն թարգմանութիւնը կայ այժմ, այն ալ հազուագիւտ։

Երկրորդ թարգմանութիւնը պիտի վերաբերի Պողոժէնիա. Ռուսահայերի եկեղեցական այս կանոնագրութեան հին թարգմանութիւնը գրաբար եղած է և պակասաւոր, և մանաւանդ այժմ ալ հազուագիւտ է։ Արդ, ընկերութիւնը այժմ կաշխատի ձեռնհաս թարգմանիչներ գտնել այդ երկու գործերի համար. Թիֆլիզի Թերթի ասելովը, ռուսերէնէ հայերէն լաւ թարգմանողներ շատ քիչ են այդ կողմերը։

— Թիֆլիզի Հայերի մէջ մեծագործութիւն կայ մի առեւտրական բարձրագոյն վարժարան հիմնել. այդ նպատակի համար արդէն 55,000 րուբլի հաւաքուեր է։

— Անգլիայի հայագէտ Բրօֆ. Կօնիբէր իր ամուսնոյ հետ Թիֆլիզ հասած է և կուղեւորի Էջմիածին, այնտեղի դպրատանի ձեռագիրներն ուսումնասիրելու համար։ Բրօֆ. Կոնիբէր մի քանի տարի առաջ ալ Էջմիածին այցելած է։ Ա.յդ ատեն Անգլիա վերադարձին, գրած էր Թիֆլիզ որ եթէ աշխատին հնագիտական ուսումնասիրութիւններ կատարել տալ Էջմիածնի ձեռագիրներուն վրայ, ինքը պատրաստ է 50 ոսկի նուիրել այդպիսի մի ուսումնասիրութեան ծախքին, և ինք այդ նամակով առաջարկած էր որ Պր. Ա. Երիցեանի յանձնուի այդ ուսումնասիրութեան գործը։

— Նովոե Վրեմիա կըհաղորդէ որ ռուս կառավարութիւնը որոշեր է 1892 թուականէն սկսած, բոլոր քահանաների եկեղեցական այն դիրքերը ապագրութիւնը միայն արտօնել որոնք ռուսերէն լեզուով գրուած են։

— Պահպանէն կը գրեն Մշակին սեպտ. 26/8 թուով որ մի քանի օր առաջ Կ. Պոլսէն այնտեղ հասնող «Ա-լէքսանդր» շոգենաւը քառասնից ննջեցեալներ է 3 օրուան համար, պատճառ որ այդ շոգենաւը իր մէջ ունեցած է 4–5 ուխտաւորներ և հաճիներ, Երուսաղէմէ և Մէքքէէ և այդ երկիրներէն ալ քոլերայ վարակուած լինելուն կասկածելի կը նկատուին։

— Ռուսիա շուտով իր հիւպատոսներն թիւը կաւելցնէ, ինչպէս Պալքանեան մի քանի երկիրներէ, նոյնպէս և Թիւրքիայի մէջ. այս վերջին երկիրը՝ արդէն եղածներէն զատ ուրիշ 10 հիւպատոսներ ալ պիտի ղրկէ։

ՀԱՑԵՐ ԳԱՄԵՐԻԿԱ

Ուսթըրի նորահաստատ հայ եկեղեցւոյ հոգաբարձութիւնն մի մանրամասն տեղեկագիր յղեր է ի Պատրիարքարան 91 սեպտ. 8/20 թուակնով, նոյն եկեղեցւոյ շինութեան պարագաներուն և հաշիւներուն մասին։

Ինչպէս կերեւի այդ տեղեկագրէն, եկեղեցւոյ շէնքն շինուած է Ուսթըրի ամենէն պատուաւոր փողոցներէ մէկին վրայ, մօտ 300 անձ պարունակելու չափ մեծ. տաճարին կից կայ և մի ուրիշ սրահ ալ որ դպրոցական կերակնօրհայ և այլ ընդհանուր գումարումներուն կը ծառայէ, ուր գրեթէ ամեն կիրակի երեկոյ մեծ բազմութիւն մը հաւաքուելով կրթական օգտակար զբաղումներ կունենայ։ Եկեղեցւոյ կալուածագիրն Էջմիածնի կաթողիկոսի իրաւասութեան ներքեւ գտնուող հայ ազգին անունովն շինուած է. գնոխնը գնուած է 1300 տոլարի մօտ (6500 ֆր. գրեթէ) մի գումարով. սկիզբէն դրամական մեծ գժուարութիւններ ծագած են, սակայն Հոգաբարձութեան անդամներուն մանաւանդ պ. Գ. Աբգեանի ըրած անտակոս փոխառութեան օգնութիւնով գործը սկսած է առաջ գալ։

Թէև ճարտարապետները առաջ 3–4000 տոլար ենթադրած են ծախքը, սակայն ի վերջոյ շինութեան գործին յանձնառութեան ժամանակ՝ գործը նուազուրդի դրուելով, առնուազն 6270 տոլարով չինել յանձն առնող ճարտարապետ գտնուեր է, մանաւանդ որ շինուածապետներն գործատուրներն 10 ժամի փոխարէն 9 ժամ աշխատելու պահանջ ընդունել տուած էին, որով ծախքը կաւելնար։ Ամբողջ ծախքն եղած է 9460 տոլար 60 սենթ, որմէ 4000 տոլար Սէյվիլկ Պէնկ գրամատունէն 5% տոկոսով եղած փոխառութիւնով հայթայթուած է, իսկ մնացածն հանգանակութիւններէ։ Հանգանակութիւնն եղած է բացառապէս Ուսթըրի և Ամերիկեան մնացած հայ գաղթականութիւններուն մէջ. մի մաս ալ Եւրոպայի Հայերէ։

Ինչ որ գիտելի է մանաւանդապէս այս գործին մէջ, դա Գեր. Յովհէփ Ծ. վարդապետին անվհատ գործունէութիւնն է որ, ինչպէս կը տեսնուի նոյն տեղեկագրէն, չհայելով թէ բազկնական հանգանակութիւնը 500 տոլարի մի փոքր գումար դոյացուցած էր, սակայն խոհոյն գործը սկսեց և հոգաբարձութեան հասատատակամ ջանկութիւնովն գլուխ տարաւ յաջողութեամբ։

Նոր հրատարակութիւններ

Շնորհակալութեամբ ստացած ենք Ս. Պետերբուրգ հրատարակուող Ա-ՐՈՒԲՈՒ պատկերազարդ վեցամսեայ հանդիսի Գ. տարու (1890) երկրորդ գիրքը (դեկտեմբեր) որի բովանդակութիւնն է հետեւեալը.

Մահացուցակ Տ. Տ. Մակար Ա. կաթողիկոս Ամենայն Հայոց. Մի երկու խօսք «Արաքս»ի հրատարակութեան մասին. Հատարակական խրնդիրներ Իրաւաբանի բաց նամակը (Գր.), Հայկական խնդրի մասին (Էմիլ որ Լավէլէ). Տեղագրական Ամասիա (Լուսէն). Բանաստեղծութիւններ Երգ (Գամառ Քաթիպա), Մարգարիտ (Նոյն) Ռաֆֆիի դագաղի վրայ (Նոյն), Աստղիկ (Սո. Մ.). Կենսագրական Մկրտիչ Էմին, Թաչատուր Միսաքեան. Բանաստեղծութիւններ Աշըղի երգը (Յովհաննէս Կոստանեանց). գեղջկուհու երգը (Նոյն). Մատենագրական Լեզու կարող (Սեւլիւկ), Անցած դնացածից (Յովհաննէս Քելչեճի). Բանաստեղծութիւններ Երգեր (Յովհաննէս Կոստանեանց). Մատենախօսական «Կոնդ Աբամաղդ»ի առիթով (Նամէն), Քերովբէ Պետրոսվիչ Պատկանով, Բիօգրաֆիչէսկիյ օչէրկ. Ազգային յիշատակարան Նամակ Րոմանիոյ հայ գաղթականութեան առթիւ (Մար. Յ.). Լրագրաց շուրջը Քաղուածք «Րուսկի վէդոմոստի» լրագրէն, Դատաւարութիւն Յուքիաս քահանայի վրայ ատրճանակ պարպող Յակոբի և իր հինն ընկերաց. Աշնեւաշյք կիլիկիոյ արդի վիճակի առթիւ հայլե. Յաւելուած «Մեր ժամանակի հերոսը» վէպի վերջը (Լերմոնտով) Թարգմ. Յ. Մալխասեանց. Պատասխանիներ. Յայտարարութիւններ. Նկարների մասին (Լ. Մազբեանց)։ — ՆԿԱՐՆԵՐ Բնագրում 1. Տ. Տ. Մակար Ա. կաթողիկոս Ամենայն Հայոց. 2. Ս. Էջմիածին և Ներսիսեան Լիճ (Լուսանկր. Պր. Վրոյրի). 3. Սեբաստիոյ տեսարանը. 4. Մկրտիչ Էմին. 5. Դաղար, Յովհաննէս, Յովակիմ և Թաչատուր Լազարեանք և Լազարեան Ձեմարան. 6. Մասիս, Ներսիսեան անտառ և Ս. Գայիանէի վանքը. 7. Իշխանուհի Մերի (Նկար Զիչի), Յաւելուածում. 8. Պօդկումօկ գետից անցնելը։ Գեղարուեստական բաժնում. 9. Ջրհեղեղից յետոյ (Նկար Ց. Այվազովսկու). 10. Աղբիւրի մօտ (Նկար Հ. Սեմիրադսկու). 11. Բոլղարացի նահատակ կանայք (Նկար Կ. Մակովսկու). 12. Թուխա (Նոյն). 13. Կահիրէի մուրացկան. (Նոյն). 14. Ուժիցը վեր (Նոյն). 15. Դերեսա գեաը գիշերը (Նկար Գ. Բաշինջագեանցի). 16. Զինադադար գագաթներ (Նոյն). 17. Փրկութիւն ազատողներ (Էմ. Մղդեսեանցի) 18. Եղեգների մէջ (Տիկին Պ. Կուրիարի)։

ԱՐԱՔՍ գրականական և գեղարուեստական վեցամսեայ պատկերազարդ հանդիսի բաժանորդագինն է տարեկան (2 գրքի համար) 3 ռուբլի։ Ամեն մի գիրքը բաղկանայու է 12 թերթից ոչ պակաս գիրքով։

ԲԱՑՈՒՄԱԾ Է «ԱՐԱՔՍ»Ի 1891-Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ։ Առաջին և երկրորդ գիրքը առանձին առանձին կամ միասին ունի շքեղ տպագրութեամբ և 32 գեղարուեստական նկարներով հանդերձ կը հրատարակուի անպատճառ ներկայ 1891 թ. աշնան վերջին, որպէս ի միւս տարի, 1892 թ., «Արաքս»ը հրատարակուի կանոնաւոր կերպով։

Ի շահ հրատարակութեան և բաժանորդների, խնդրուում է յանկացողներից օր առաջ ստորագրուելու «Արաքս»ին։

Արաքսի խմբագրութեան հետ գործ ունեցողները և բաժանորդ դիրուղները դիմելու են Սիմէոն Գուլամիրեանցին ընդ միշտ այս պարզ և միանգամայն ապահով հասցեով.

Monsieur
Siméon Coulamiriantz
St. PÉTERSBOURG

Ուսանողների միջադէպ մը

Ֆրանսական լրագիրները հակտ. 29 թուով հետեւեալ լուրը կըհրատարակեն, թէև այդ ատուգելու համար տակաւին ուրիշ աղբիւրներէ տեղեկութիւն հասած չէ։ «Ցորպատի (Ռուսիոյ արեւմտեան մի քաղաք) մէջ ռուս և ալմանացի ուսանողները արիւնահեղ մի կռիւ ունեցան իրար հետ։ Նախընթաց օրը Համալսարանի ռուս ուսանողները մի պարահանդէս կատարէին և նպաստ իրենց աղքատ ընկերների. պարահանդէսը վերջանալու ժամանակ, ալմանացի ուսանողները որոնք գինովցած էին գարեջրով և շնապարով, կ'սկսին նախատական վարմունք մը ցոյց տալ ռուս կիներուն, և իրենցմէ մին մինչեւ իսկ հաշտարար դատաւորի կնոջ չըվաղեսաը պատռելու չափ առաջ կերթայ։ Ազգը վրայ կուգ կը փրթի և Ալմանացիներուն դուրս հանուելովը կը վերջանայ։ Բայց ատենք չանցած կը վերադառնան սուրերով և բէվոլվըրներով զինուած, ահա այդ ատեն կանոնաւոր կռիւ մը կը սկսի. Ալմանացիները ոգեւորուած՝ իրենց ազգային մի երգ կը հնչեցնեն, «կեցցէ Վիլհելմ կայսր» կը գոչեն. Ռուսներն հակառակորդներին կը պատասխանեն իրենց ազգային երգով և Մարսէյեզովն։ Գրգռութիւնը հետզհետէ կաճի և բէվոլվըրների հարուածներուն մի քանի փոխանակութենէ ետք, Ալմանացիները կըստիպուին ետ քաշուիլ։ Սակայն ռուս ուսանողները իրենց յաղթութեամբ արբած, խըմբովին ալմանացի ուսանողների կռտրօճիա ընկերակցութեան սրահը կերթան և կ'սկսին այնտեղ գտնուած ամեն ինչը կոտրել, թափել և վերջապէս տունը այրել։ Երեկ Ռուսները դարձեալ կրկնեցին իրենց արշաւանք։ Ալմանացիներէն վերաբերեալ մի շատ տուներ, նոյնպէս ուսանողների վարձած բնակարաններ կողոպտուեցան։ Ոստիկանութիւնը ցարդ չէ կրցած բարեկարգութիւնը վերահաստատել։ Հետագրով ըսուած է և անոնց գլուխն կ'սպասուի։ Առայժմ յայտնի չէ մեռածներն և վիրաւորուածներն թիւը։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

*Գարատաղի Նահատորմը. — Գարատաղի իշխանը վերջերս Անգլիան նաւարաններին ապսպրած է 3 չոգենաւներ չինել որոնք պիտի բանին Գարատաղի նաւահանգիստներուն և Օտեսայի միջեւ։ Եւ որովհետեւ Գարատաղ իրաւունք չունի Ադրիական ծովի մէջ իր առևտրական չոգենաւներուն վրայ Գարատաղի դրօշ պարզել, հետեւապէս ստիպուած է սպասել մինչեւ Գարատաղի նաւահանգիստները